№ 7 Յունվարի 17 (29) 1881 Յունվարի 17 (29) № 7

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաբաղաքացիք գիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 ռուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Անդրկասպեան երկրից։ Նամակ Երևանից։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Նամակ Փօթիից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիական թագուհու գահակալ ճառը։ Անգլիա։ Պարսկաստան։ Նամակ Պարսկաստանից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻՑ

—

„Кавказъ" լրագրի մէջ տպված է հետեւեալ պաշտօնական հաղորդութիւնը։

Երէկ ես բաղդ ունեցայ շնորհաւորել թագաւոր Կայսրին կատարեալ յաղթութիւնը, որ մեր զօրքերը գեներալ Սկոբելևի առաջնորդութեամբ ունեցան տեկինցիների վրա հետեւեալ հեռագրով։

„Յունվարի 12-ին ինն ժամ տեւող արիւնահեղ պատերազմից յետոյ մեր զօրքերը վերջին շտուրմով Գէօկ-Տեպէ և Դենգիլ-Տեպէ անուանված թշնամու բոլոր ամրացած դիրքերը։ Թշնամու զօրքերը բոլոր գծերի վրա ստիպված են եղել փախչել։ Նրանց ջարդում էին 15 վերստ տարածութեան վրա։ Յաղթութիւնը կատարեալ է։ Մենք վերցրինք մեծ քանակութեամբ զէնքեր, թնդանօթներ, պատերազմական պաշարներ, բանակը և կուի ժամանակ վերադարձրինք լեռնային երկու թնդանօթներ։ Մեր կորուստները դեռ հաշուում են։ Թշնամու կորուստները ահագին են։ Զօրքերը անպայման քաջութեամբ էին կուում։"

Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց բաղդաւորել ինձ հետեւեալ հեռագրով.

„Շնորհակալ եմ Աստուածանից Մեզ շնորհած կատարեալ յաղթութեան համար։ Դու կը հասկանաս իմ ուրախութիւնը։ Շնորհակալ եմ քո կարգադրութիւնների համար, որոնք Մեզ համար այդպիսի նշանաւոր հետեւանքով պսակվեցան։ Յայտնիր իմ խորին շնորհակալութիւնը մեր բոլոր քաջերին, որոնք կատարելապէս արդարացրին իմ բոլոր յոյսերը։ Գեներալ-ադիւտանտ Սկոբելևին կատարեալ գեներալի աստիճան և սուրբ Գէորգի 2-դ կարգի շքանշան ընծայեցի։ Հրամայիր, որ շուտով ընծաների ներկայացնի գերազանցվածներին։"

Կայսերական այսպիսի նոր ողորմութիւնը դէպի ինձ և ինձ յանձնված զօրքերը յայտնում եմ կովկասեան զօրքերից։

Այս հրամանը տուած է կովկասեան զօրքերին Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Կովկասեան փոխարքայից։

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

22 դեկտեմբերի 80

Լրագրների թղթակիցները Երևանի ամեն հասարակական հիմնարկութիւնների մասին խօսել ու գրել են քիչ թէ շատ, բայց մեր կլուբի մասին լռում են, որ իր բուն կրթողական նշանակութիւնը կորցրած՝ միայն թղթախաղի և շռայլութեան կրկէս է դարձել չինովնիկ ու վաճառական, արհեստաւոր և ուսուցիչների համար։ Այնտեղ անդամ են քաղաքիս բոլոր դասակարգի մարդիկ. դուք կը տեսնէք երկարափափախ պարսիկներ, հինայագլուխ խաներ, դուք կը տեսնէք մանր մունր պիսարներ, և այլ և այլն։ Մեր կլուբի անդամները այնքան չեն ընտրվում, որքան ընդունվում։ Կլուբի խեղճ անդամները ամեն կիրակի օր «երեկոյ» են սահմանել։ Մտնում էք ներս. դահլիճներում ճրագները վառ են. մուզիկան հնչում է, կոկված կավալէրները դահլիճում պարապ զբօսնում են, այն ինչ դամայի հետքն անգամ չէ երևում..... Այս քանի օրերումս մի ռուս պարոն կլուբի դահլիճում հրապարակական դասախօսութիւն արեց 1874 թ. Հնդկաստան արած իր ճանապարհորդութիւնից։ Իւրաքանչիւր ոք, ով գիտէ հայերէն կամ ռուսերէն կարդալ, կարող էր գրքերից աւելի շատ տեղեկութիւն ստանալ, քան թէ պարոնի անհամ դասախօսութիւնից։

Խօսելով տեղւոյս դպրոցների վերաբերութեամբ՝ «Մշակի» № 214-ում կարճ կերպով շատ ուղիղ էր նկատել պ. Նորայրը թեմական դպրոցի հոգաբարձուների բռնած վնասակար ընթացքը։ Ի հարկէ այդպէս կը լինի և ամեն տեղ, ուր որ մի բան կատարում են ոչ թէ օգտակարութեան համար, այլ ուրիշներին նմանվելու համար. ի հարկէ խախուտ կը լինի մի դպրոցի դրութիւնը, որի ծախքերը եկամուտից աւելի են և որի չնչին դրամագլխի մասն էլ կը բաժանվի իրանց աղգականների ու սիրելիների մէջ, իբրև պարգև անխոնջ աշխատանաց. չը մոռանաք, որ հոգաբարձուներից մէնն էլ «Պսակ» մանկավարժական լրագրի խմբագիր պարոն դոկտոր Վ. Պապաջանեանցն է...

Կոնդի Նորաբաց Սահականուշեան օրիորդաց դպրոցը այս տարի ցած իջաւ քաղաքը և կարծես աւելի կենդանութիւն ստացաւ. սանուհիների թիւը կրկնապատվել է և ի հարկէ այս ամենի համար պարտական ենք այնտեղի հմուտ և ժրաջան վարժուհի օրիորդ Տէր-Մարուքեանցին, որ իր բարձր ուսումով և հիանալի ձեռագործութեամբ յայտնի է ողջ Երևանին։

Քաղաքային վարչութեան և խորհրդարանի յարաբերութիւնները խիստ սառն են, և հէնց այդ է պատճառը, որ կրիայի քայլերով են յառաջ գնում գործերը, եթէ չասենք խեցգետնի։ Եղանակները առ այժմ անցնում են շատ բարեխառն. քաղաքացիք սպասում են գարնանը, աւելի նրա համար, որ արդէն վճռված է Երևանից 40 վերստ հեռաւորութեամբ գտնված Գրիբուլաղի ջուրը հանեն բերեն քաքաքը, քանի որ ամառ ժամանակը այնքան շատ զգալի է լինում ջրի պակասութիւնը։ Այս մեծ գործին խոստացել է օգնել պ. Ղևոնդ Ղազարեանը. նա յանձն է առել մինչև 10 կամ գուցէ և 20 հազար ռուբլով օժանդակել։ Մեծ և բարի գործ։

Վ.ռայր

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Դեկտեմբերի 26-ին, 80

Այս անգամ ես կամենում եմ խօսել մի նիւթի վրա, որ իւրաքանչիւր հայի համար հետաքրքիր է, այն է Մոսկվայի Լազարեան ճեմարանի վերաբերութեամբ։

Արդէն 1815 թ-ից, երբ բացվեց այդ ճեմարանը, Լազարեանները դրեցին ապահովութեան մի դրամագլուխ այդ դպրոցի դանձարանը, մօտ մի միլիոն ռուբլ, որպէս զի այդ փողերի հաշուով ի միջի այլոց, Լազարեան ընտանիքի հաշուով դաստիարակվեն այդտեղ 50 աշակերտներ մինչև ընթացքը լիցէումի մէջ աւարտելը։ Որովհետև այն ժամանակ, երբ բացվեց ճեմարանը, ամբողջ հայոց աշխարհը դեռ ես խաւարի մէջ էր, չունենալով գրեթէ ոչ մի ուսումնարան, այդ պատճառով Լազարեանները մտածեցին իրանց ճեմարանի մէջ դաստիարակել և հոգևորականութեան համար երիտասարդներ, ընդունելով աշակերտներ նոյն իսկ հոգևորական դասակարգից։ Այդ նպատակով սահմանեցին այն օրից 50 վանականից 30 հատ տալ աշխարհականների որդիներանց, իսկ 20 հոգևորականների զաւակներին։

Բայց այսչափ տարվայ մէջ, որ մօտ 70 տարի է, Լազարեան ճեմարանում աւարտած հազարաւոր հոգևորականների զաւակներից գրեթէ երկու երեք հատ չը կայ, որոնք իրանց նուիրեին հոգևորականութեանը։ Սրանից պարզ է, որ Լազարեանները սխալվեցին իրանց դիտաւորութեան մէջ։ Հոգևորականների որդիք, ուսում աւարտելուց յետոյ, աշխարհական էին դառնում։

Այնուհետև, 1815 թ-ից յետոյ մինչև այժմ բացվել են՝ Ներսիսեան դպրոցը, հայաբնակ գաւառական քաղաքներում այլ միջնակարգ հոգևոր դպրոցներ, վերջապէս և Էջմիածնի ճեմարանը, որոնք բոլորն էլ նպատակ ունեն պատրաստել գլխաւորապէս հոգևորականներ։ Ուրիշ հարց է, թէ որքան հասնում են այդ դպրոցները իրանց նպատակին, բայց քանի որ հարիւր հազարներ են վատնվում մեր հոգևորականների կրթութեան համար մեր բոլոր դպրոցներում, այլ ևս ինչ հարկ կայ պահպանել Լազարեան ճեմարանում սկզբնական 20 վանականոց ամբողջութեամբ հոգևորականների զաւակներին կրթելու համար։ Մի թէ աւելի օգտակար չէր լինի, եթէ 20 տեղը բաժանվէր երկու մասի վրա, որոնցից տասը դարձեալ պահվէր հոգևորականներ պատրաստելու համար, իսկ մնացած 10 վանականներ յատկացվէին կովկասեան այն հայերի զաւակներին, որոնք օտարացել են իրանց ազգութենից և մայրենի լեզուից և խորթանում են նոյնպէս իրանց պապերի հաւատից, դիմելով օտար դաւանութիւններին։ Ես խօսում եմ գլխաւորապէս Վրաստանի, Կախեթի, Գօրու, Քութայիսի օտարացած հայերի և Նուխու կողմերի ուտիացի հայերի մասին, մի խօսքով կովկասեան այն բոլոր հայերի մասին, որոնք հետզհետէ կորցնում են թէ լեզուով և թէ ազգութեամբ իրանց հայ լինելու մասին ինքնաճանաչութիւնը։

Ի հարկէ աւելի էլ լաւ կը լինէր, եթէ Լազարեան տոհմի այժմեան ներկայացուցիչ Իշխան Աբամէլիք-Լազարեանը, հայրենասիրական զգացմունքից թելադրված աւելացնէր առհասարակ վանականների թիւը,—այն ժամանակ հարկ չէր լինի հոգևորականների համար եղած վանականները կիսով չափ պակասեցնել, վերև յիշած օտարացած հայերի զաւակներին միւս կէսը տալու համար։ Այն ժամանակ կարելի էր ընդունել Լազարեան ճեմարանում և թիւրքաց Հայաստանից մանուկներին։ Բայց եթէ հնար չը կայ վանականների թիւը աւելացնել,—գոնէ ցանկալի է որ մտցրած լինի այն փոփոխութիւնը, որ ես վերև յիշեցի։

Ցանկալի էր մանաւանդ ընդունել Կովկասի այնպիսի տեղերից աշակերտներին, որտեղ հայ տարրը թէև օտարացած է, բայց բազմաթիւ է, ինչպէս օրինակ Նուխու կողմերում, այն ինչ, օրինակ, Քութայիսի կողմերում, կամ Կախէթում հայերը քիչ են թուով։ Այս խնդիրը յարուցանելով ես, ի հարկէ, հարցը չեմ կամենում վճռել, այլ թողնում եմ նրա վճռելը Իշխան Աբամելիք-Լազարեվի խոհեմութեանն ու առողջամտութեանը։

Երէկ լսեցի, որ Ս. Պետերբուրգի և Մոսկվայի հայ եկեղեցիների կալուածական գործը վճռվեցաւ մինիստրութիւնից յօգուտ Իշխան Աբամէլիք-Լազարեանցի, այսինքն վճռվեցաւ, որ այն, ինչ հաստատել են յաջորդաբար իրանց ստորագրութեամբ չորս կայսրներ՝ թողնել Ս. Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցական կալուածների տնօրինութիւնը Լազարեվների ժառանգների իրաւունքի տակ, մնայ դարձեալ անփոփոխ։

Ուրեմն այն ազգասէր պարոնները, որոնք իրանց շահասիրական նպատակների համար որոգայթներ էին լարում և ինտրիգաներ անում Լազարեանների դէմ, ամօթով մնացին։

Ս.

ՆԱՄԱԿ ՓՕԹԻՑ

—

21 դեկտեմբերի 80

Փօթի քաղաքը Մինգրէլիայի քաղաքներից մէկն է, որը գտնվում է Սև ծովի ափին։ Վաճառականութեան կողմանէ Փօթին յիշվում է ծովային դուռն Կովկասից դէպի արտասահման և Ռուսաստան և կենտրոն ապրանքներ դարդակելու և բարձելու շոգենաւերից։ Ունի երկու փայտաշէն եկեղեցի, այն է ռուսաց և հայոց։ Քաղաքի բնակիչներն են՝ վրացիք, մինգրել, գուրիացի, հայ, ռուս և յոյն։ Հայերն ու յոյները ամենաքիչ բաժինն են բնակիչներից, բայց վաճառականութեան գլխաւոր մասերը իրանց ձեռքերումն ունեն բռնած։ Հայերն ունեն մէկ խոհեմ հայ քահանայ, որի շնորհիւ արդէն փոքրիկ հայոց ուսումնարան են մտադիր բանալու և որի համար արդէն փող է ժողոված և ժողովվում է։ Բոլոր հայերը, թէ լուսաւորչական և թէ կաթոլիկ այնպիսի սէր ունեն միմեանց հետ, որ մի օր չեն կարող անցկացնել մէկն առանց միւսի, որ չը յայտնեն միմեանց իրանց կարծիքները։ Բոլոր հայ կաթոլիկները (բացի Խէչինովից, որը չէ իմանում, թէ ինքն ինչ է), յաճախում են լուսաւորչական եկեղեցին՝ ունեն եկեղեցական գործերի մէջ այնքան իրաւունք, ինչքան լուսաւորչականներն, և եկեղեցու բոլոր հոգսերն հոգ-

վում են հաւասարապէս։ «Մշակի» վերջին ցուցակներից պարզ կերևայ Փոթիի փոքրիկ հայ խումբի ինչ աստիճան ազգասէր լինելն և թէ ինչ եռանդով է օգնել ազգի կարօտութիւններին։ Փոթիի մէջ առանձին ժողովարան, գրատուն կամ բիբլիոտեկ չը կայ, միայն հարկաւոր ժամանակ ժողովն լինում է քահանայի տանը, իսկ լրագիրներ կարդալու համար դայֆեխանան։ Վերջին ժամանակներս Դիարբէքիրից կամ ուրիշ տեղերից աղքատ հայ ընտանիքներ են անցնում Փոթիով դէպի Թիֆլիս, որոնք իրանց բոլոր անցքերը պատմելուց յետոյ օժանդակութիւն են ստանում ժողովրդից փողով և հագուստով։ Նորերումս մէկ ամբողջ աղքատ ընտանիք բաղկացած երեք հոգուց Փոթի եկած էին Հայաստանից իրանց համար ապահով տեղ փնտռելու. պ. Ստեփան Ղամբարեանը այդ ընտանիքն ընդունեց իրան հովանաւորութեան տակ նշանակելով ամիսը 10 ռուբլի փողով, գետին, բնակելու համար տուն, ցանելու համար զանազան սերմեր և գործիք գետին փորելու, որից եկած օգուտներն կրկին կը մնան յօգուտ հայ աղքատ ընտանեաց։ Փոթիի հայ երիտասարդները իրանց կողմանէ պարոն Ղամբարեանին մեծ շնորհակալութիւն են նուիրում։ Կեցցեն այդպիսի ազգասէրները։ Վերջացնում եմ նամակս այս մէկ քանի խօսքերով. Թող միւս քաղաքի հայ բնակիչներն էլ օրինակ վեր առնեն Փոթիի փոքր խմբից, թող յետ չը մնանք ուրիշ ազգերից։

Ղազար Տէր-Ղազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Տպելով «Մշակի» ներկայ համարում Փոթիից գրած նամակը, հարկաւոր ենք համարում յայտնել որ Փոթիի թղթակիցը վաղարշապատցի Ղազար Տէր-Ղազարեանցը չէ, այլ դա մի բոլորովին ուրիշ անձն է։ Պարոնը ինքն խնդրում է մեզ յայտնել որ նա վաղարշապատցի Ղազար Տէր-Ղազարեանցը չէ, այլ նա ղարաբաղցի է, և բնակվում է սովորաբար Փոթիում։

—

Անցեալ 1880 թվին յունվարի 15-ին «Մշակը» ունէր 550 բաժանորդ, իսկ այս տարի յունվարի 15-ին մենք արդէն ունենք 800 բաժանորդ, ուրեմն 250 աւելի, քան թէ անցեալ տարի։ Բաժանորդների այդ տեսակ մեծ թիւ յունվարի կէսին մենք երբէք ունեցած չենք։

—

Մեզ գրում են Լալվարի պղնձահանքից (մադանից), որ գտնվում է Սանահնից 5 վերստ հեռաւորութեամբ, թէ յունվարի 7-ին, գիշերով, աւազակները մտել են յոյն տիկին Սոփիա Մաքրոզլեանցի տուն, տիկին Սոփիային սպանել են դաշոյնով (խանջալով), կտրել են որովայնը և թափել են աղիքները, իսկ ծառային և աղախնուն մորթել են։ Ձարագործները դեռ ևս անյայտ են։ Ցոյները պատմում են որ բաւական մեծ քանակութեամբ արծաթեղէն են տարել չարագործները։

—

Լօռու գաւառի Աքօրի գիւղից մեզ հաղորդում են որ յունվարի 2-ին Սարգիս Ուհանեանց, որ նոյն գիւղի տանուտէր էր, նաթով այրվեց և վախճանվեցաւ։

—

«Մշակի» խմբագիրը շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր անձինքներին, որոնք այս օրերս թէ հեռագիրներով և թէ մասնաւոր նամակներով բարեհաճել են շնորհաւորել «Մշակի» տասներորդ շրջանի սկսվելը և աջողութիւն են ցանկացել մեր լրագրին։

—

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՑ, որ այդ քաղաքում մի երիտասարդ, որ աւարտել է իր ուսումը էջմիածնի ճեմարանում, դիտաւորութիւն ունի հրատարակել մի ամսագիր «Գործ» անունով։

—

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ մեզ գրում են։ «Մեր գիւղի պրիստավ պ. Մամիկոնեանը աշխատում է մտցնել ժողովրդի մէջ ինքնաճանաչութիւն, ինքնաօգնութիւն և պարտաճանաչութիւն։ Նա ժամանակ առ ժամանակ հաւաքում է գիւղի նշանաւոր բնակիչներին, յորդորում է նրանց որ դրպրոց պահեն, բացատրում է նրանց ուսման անհրաժեշտութիւնը, մի և նոյն ժամանակ քաջալերում է գիւղացիներին, խոստանալով, որ միշտ կօգնէ նրանց իր կարողութեան չափ նրանց ամեն մի օգտաւէտ ձեռնարկութեան մէջ։ Զմեռվայ պարապ ամիսներում շատ գործ լինելով, նա խնդրում է ժողովրդից օգնականներ տալ իրան, որպէս զի հացի ամբարներ իրագործի գիւղի մէջ։ Մամիկոնեանը խոստանում է փողոցները գծագրել տալ և ժողովրդի օգնութեամբ գարնան սկսվելուն պէս նոր դպրոցի շինութեանը ձեռնամուխ լինել։ Մի ամիս կը լինի որ մեր գիւղից հեռացաւ երկրաչափ Ուշիարով, որ իր գործունէութեամբ մի տխուր յիշատակ է թողել գիւղացիների վրա։ Ոչ ոք չէ ափսոսում նրա հեռանալու մասին։»

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են, որ Նորերումս Նուկրիան գիւղում վախճանվել է մի մարդ։ Հանգուցեալի ազգականները չը կամենալով որ գիւղի քահանայ տէր Սարգիս Տէր-Անտոնեանը, որ սիրված չէ գիւղում, թաղման կարգը կատարի, խնդրում են կոնսիստորին որ ուրիշ քահանայ նշանակի թաղման կարգը կատարելու։ Բայց կոնսիստորիան մերժում է. այն ժամանակ գիւղի ժողովուրդը թաղում է հանգուցեալին առանց քահանայի։ Երբ արդէն ննջեցեալը թաղած է լինում, այն ժամանակ կոնսիստորիան հրամայում է Սղնախի գործակալ քահանային թաղման կարգը կատարելու։

—

Հալաբարի ուսումնարանների մասին շատ քիչ են գրում, նրանց մասին շատ քիչ էլ հոգում են։ Նրանց մասին չէ հոգում, մինչև անգամ թեմական վերատեսուչը, որ չը գիտէ թէ Հալաբարի ամեն ծակ ու ծուկում դպրոցներ կան, թէև շատ անբարեկարգ։ Եթէ պ. Գ. Բարխուդարեանը միջոց և ժամանակ չունի վերահսկել այդ բոլոր դպրոցների վրա, ինչի չէ դիմում նոյն իսկ Հալաբարում ապրող մի քանի երիտասարդներին և չէ խնդրում նրանց իրանց օգնելու, իր օգնականների պէս վերահսկելու այդ կորած, մոլորված դպրոցների վրա։ Մենք կը ցոյց տանք երկու երիտասարդների վրա, որոնք մեր կարծիքով կարող էին յանձն առնել այդ աշխատանքը և մեծ օգուտ տալ Հալաբարի ուսման գործին. դրանք են պ. պ. Թէմուրազեանց և Գուլակեանց, որոնք Ներսիսեան դպրոցում են աւարտել իրանց ուսումը և վաղուց է պարապում են ուսուցչութեամբ, ուրեմն բաւական փորձառու ժողովրդական մանկավարժներ կարող են համարվել։

—

Կախէթի ԿՈՒԼԱՇ գիւղից մեզ գրում են։ «Այդ գիւղը բաղկացած է 120 տուն վրացի բընակիչներից, որոնք բոլորն էլ Միքէլաձէ իշխանական տոհմին են պատկանում, թէև բոլորն էլ գիւղացիներ են, և 200 տուն հրէաներից։ Երկու ամիս սրանից առաջ Փոխարքայի օգնական իշխան Մելիքով եկաւ այդ գիւղը։ Դրան ի հարկէ շատ փառաւոր կերպով ընդունեցին և ճաշ տուեցին։ Իշխանը ամենքի հետ վրացերէն էր խօսում։ Թող բարձրաստիճան հայերը օրինակ առնեն Իշխան Մելիքովից, որ չէ արհամարհում իր մայրենի լեզուն, այն ինչ հայերի մեծ մասը հէնց որ բարձր աստիճանների են հասնում, ըսկսում են արհամարհել իրանց մայրենի լեզուն։»

—

Մեզ գրում են ԴՈՒՌՆՈՒԿ գիւղից հետևեալը։ «Դուռնուկ գիւղը գտնվում է Թիֆլիսից հարաւարևելեան կողմը, 40 վերստի չափ հեռաւորութեամբ, Ալգեթ կոչված գետի վրա։ Գիւղը ունի 70 տուն բնակիչ, որոնցից 10 տուն յոյներ են, բոլորն էլ քարտաշներ, 4 տուն հայախօս վրացիք և 56 տուն հայ-լուսաւորչականներ, որոնք, առանց բացառութեան, պարապում են երկրագործութեամբ։ Գիւղը ունի երկու քարաշէն եկեղեցի, մինը հայոց, միւսը վրաց, բայց չունի ոչ մի դպրոց։ Դուռնուկը պատկանում է Ալէքսանդր և Յովհաննէս Կամսարական-Շահազիզեաններին, որոնք ստանում են գիւղացիներից բահրա կոչված հարկը տարեկան 5000 պուդ, մեծ մասամբ ցորեն, իսկ փոքր քանակութեամբ գարի, որ տարեկան մօտ 10,000 ռուբլ է անում, առանց հաշուելու իրանց այգիների, երկու ջրաղացների և քարահանքերի արդիւնքները։ Չը նայելով այս ահագին արդիւնքին, որ պ. պ. կամսարականները ստանում են, նրանք չեն էլ մտածում ժողովրդին մի որ և է լաւութիւն անելու, գոնէ մի ուսումնարան իրանց հաշով հիմնելու, որտեղ գիւղացիների զաւակները կրթութիւն ստանային։ Սրանից մի քանի տարի առաջ Յովսէփ Արարատեանը, գալով Դուռնուկ, զանազան խոստումներ անելով գիւղացիներին, յորդորում է նրանց որ համաձայնութիւն տան նրան քահանայ ձեռնադրվելու։ Նա խոստանում է ի միջի այլոց միշտ Դուռնուկի մէջ ապրելու։ Բայց երբ նրան աջողվում է ձեռնադրվել, նա ոչ ինքն է գալիս մեր գիւղը, ոչ էլ իր ընտանիքն է տեղափոխում մեզ մօտ, և ահա քանի մի տարի է ապրում է Շամշուլդա գիւղում, ժամանակ առ ժամանակ երևալով միայն Դուռնուկի մէջ։ Այդպիսով մենք մնում ենք տարիներով առանց քահանայի։»

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքի հայոց դպրոցները շատ անմխիթար դրութեան մէջ են, շնորհով անընդունակ տեսուչների, անփորձ վարժապետների և վերին աստիճանի անհոգ և իրանց պարտքը չը ճանաչող հոգաբարձուների։ Նամակագիրը առաջարկում է որ ժողովուրդը իր իրաւունքները ճանաչի, հսկելով հոգաբարձուների անսանձ գործունէութեան, նրանց յանցաւոր կամայականութեան վրա և ուրիշ կողմից չը խնայի միջոցներ լաւ տեսուչ և օրինաւոր ուսուցիչներ բերել տալու համար։

—

ԵՐԵՒԱՆԻՑ Յովսէփ աւագ քահանայ Մէլեանց խնդրում է մեզ տպել հետևեալ նկատողութիւնը Նորայրի նամակի առիթով, որ տպված էր «Մշակի» անցեալ տարվայ 214 համարում։ «Նորայրը ասում է իբր ես Գայեանեան դպրոցում 20 դաս ունենալով, 30 դաս էլ ունենալու եմ արքունի դպրոցում, այն ինչ յայտնի է, որ արքունի դպրոցում կրօնի և հայոց լեզուի դասերը բոլորը միասին 20-ից աւելի չեն։ Իսկ Գայիանեան դպրոցում ես ունեմ ընդամենը 4 դաս և ոչ թէ 20 դաս։ Ցաւում եմ, որ գտնվում են անհատներ, որոնք մոլերեցնում են խմբագրութիւնը այլ և այլ խնդիրների մասին գրելով, յափշտակվելով անձնական ատելութեամբ դէպի այս կամ այն անձը։»

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻ մեր թղթակիցը դարձնում է թէ Էջմիածնի և թէ մանաւանդ Նորին Վեհափառութեան ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ Վլադիկավկասի հայ հասարակութիւնը զուրկ է մի կրթեալ հայ-լուսաւորչական քահանայից։ Երբ, հարցնում է թղթակիցը, վերջ կը դրվի տգէտ և մոլի տիրացուների քահանայ ձեռնադրվելուն։ Դեկտեմբեր ամսի սկզբներում Աստրախանի վիճակի բոլոր եկեղեցիներում կարդացվեցաւ Սինոդի շրջաբերականը, որով արգելվում է վիճակաւոր առաջնորդին ձեռնադրել քահանայ որ և է անձն, որ չէ աւարտել իր ուսումը մի բարձրագոյն կամ միջնակարգ դպրոցում, օրինակ ճեմարանում կամ Ներսիսեան դպրոցում։ Չէ անցնում մի շաբաթ,—և յանկարծ էջմիածնից հեռագրով հրամայում են Աստրախանի առաջնորդին ձեռնադրել քահանայ Վլադիկավկասի մի տիրացուին, որ ոչ թէ միայն ոչ մի տեղ ուսում չէ աւարտել, այլ առհասարակ ոչ մի տեղ ուսում չէ առել և կատարեալ տգէտ, անգրագէտ մի անձնաւորութիւն է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ ԳԱՀԱԿԱՆ ՃԱՌԸ

—

Պարլամենտը բացվելու ժամանակ կարդացվեցաւ անգլիական Թագուհու հետևեալ գահական ճառը։

Լորդեր և պարոններ, ես հրաւիրեցի ձեզ ժամանակից առաջ ձեր աշխատանքները սկսելու համար, ի նկատի ունենալով օրակարգ նշանաւոր հարցերը, որոնք անյապաղ պէտք է քննվեն։ Իմ յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ բարեկամական են։ Չերնոգորիական հարցը լուծվեցաւ և թէպէտ Բերլինի դաշնագրի մի քանի նշանաւոր կէտերը անկատար են մնացած, բայց ես նրանց վրա առանձին ուշադրութիւն եմ դարձնում։

Տրանսվաալի մէջ ծագած ապստամբութիւնը ստիպեց ինձ եռանդոտ միջոցներ գործադրել և յետաձգել այն նախագիծները, որոնց նպատակն էր արտօնութիւններ տալ գաղթականներին։ Ես շատ ուրախ կը լինեմ, եթէ ապստամբութիւնը դադարի բարեկամական միջոցներով։

Խօսելով աֆգանական պատերազմի մասին, Թագուհին նկատում է, որ նա վերջացած է, որ զօրքերը յետ են կանչված Հնդկաստան և որ նրանց մի բաժինը միայն ժամանակաւորապէս գրաւում է Կանդահարը։

Իրլանդիայի մասին ճառի մէջ ասված է, որ այս տարի կալուածական յանցանքների թիւը համեմատաբար մեծացել է և որ անձնական ապահովութիւնը պաշտպանելու համար կարելի եղած տնօրինութիւնները արված են։ Ճառը նկատում է, որ Թագուհու իրաւունքները բաւականացուցիչ չեն կարգը պահպանելու, օրէնքը յարգել տալու և բնակիչների գոյքը և անձնական ազատութիւնը պաշտպանելու համար։ Այդ իրաւունքները ստանալուց յետոյ Թագուհին նոր օրէնքներ կը պահանջէ Իրլանդիայի մէջ եղած անբաւականութեան առաջն առնելու և նրա օրէնսդրութիւնը բարւոքելու համար։

Թէպէտ 1870 թուականի կալուածական օրէնքը նպաստեց իրլանդացի ֆերմերների բարօրութեանը, բայց նա բաւականացուցիչ չէ և հարկաւոր է նրան լրացնել և վերաքննել։

Պարլամենտին կառաջարկվի փոխել այն օրէնքը, որ թոյլ է տալիս մարմնական պատիժ զօրքերի և նաւաւորների մէջ ծառայողների համար։

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։

Դեկտեմբերի վերջերին անգլիական համայնքների ժողովի մէջ դեռ ևս քննվում էր անգլիական Թագուհու գահական ճառի պատրաստութիւնը։ Այդ վիճաբանութիւնները սովորականից հակառակ դեռ ևս երկար ժամանակ կը տևեն և այդ վիճաբանութիւնների ժամանակ կը պարզվեն այն հարցերը, որոնք պէտք է քննվեն անգլիական պարլամենտի մէջ։ Գլադստոնին հարց առաջարկվեցաւ, թէ արդեօք նրան յայտնի են Յունաստանի և Թիւրքիայի վտանգաւոր յարաբերութիւնները։ Մինիստրութեան նախագահի պատասխանը նշանաւոր է նրանով, որ նա ապացուցանում է, թէ պետութիւնների մէջ դեռ ևս համաձայնութիւն չէ կայացել յոյն-թիւրքական վէճը խաղաղ ճանապարհով լուծելու մասին։ Այդպիսով հաստատվում է պետութիւնների մէջ եղած անհամաձայնութիւնների մասին տարածված լուրերը և այդ անհամաձայնութիւնների պատճառը այն է, որ Անգլիան անիրաւացի է համարում Ֆրանսիական կառավարութեան առաջարկութիւնը գիջումների մասին Յունաստանի կողմից։ Այնու ամենայնիւ Գլադստոն յոյս ունի, որ գործը կարող է խաղաղութեամբ վերջանալ։

Չը նայելով, որ յոյն-թիւրքական խնդիրը բաւական նշանաւոր է, այնու ամենայնիւ նա երկրորդական դիրք է բռնում իրլանդական հարցի պատճառով, որ նոյնպէս պարլամենտի վիճաբանութիւնների առարկայ է դարձել։ Պարլամենտի անդամներից մէկը, համակրելով կալուածական այն օրինագծին, որ Գլադստոն մտադիր է առաջարկել, առաջարկեց այդ օրինագծի քննութեանը չը սպասել և հիմիկուց մի մասնաժողով ընտրել, որ նշանակէ կալուածական հարկերի քանակութիւնը։ Նա պնդում էր, որ այդպիսի կարգադրութիւնը միջոց կը տար կառավարութեանը չը դիմել ստիպողական և արտաքոյ կարգի միջոցներին։ Փաստերով ապացուցվեցաւ, թէ քանի որ Իրլանդիայի մէջ այժ ունեն սով-